«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ՍԵՎԱՆԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «Газпром Армения»
СЕВАНСКИЙ ФИЛИАЛ ПО ГАЗИФИКАЦИИ И ГАЗОСНАБЖЕНИЮ
1501, ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նալբանդյան 31: 1501, РА, Гегаркуникская обл., г. Севан, ул. Налбандян 31.
Հեռ.՝/Тел: (0261) 2 31 82 , Ֆաքս՝/Факс: (0261) 2 31 82. E-mail: sevangaz@mail.ru

№ 01-10/360

«17» 08 2018թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի
Սևան քաղաքի Շահումյան 35 /34
բնակարանի բնակչուհի
Անահիտ Սարգսյանին

Հարգելի տիկին Սարգսյան

Ի պատասխան Ձեր դիմումի հիշեցնում եմ, որ Ձեր հետ 10.06.2015 թվականին կնքված բնական գազի մատակարարման մասին պայմանագրի. անբաժանելի մասը հանդիսացող ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին համաձայնագրի 2.4 կետի 1-ին ենթակետի համաձայն մատակարարը պարտավոր է՝

անձամբ կամ այլ կազմակերպության միջոցով տարեկան առնվազն 2 անգամ բաժանորդին մատուցել գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն.

նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված ծառայությունների մատուցումն իրականացնել առնվազն մեկ անգամ՝հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում /1-ին հաշվարկային կիսամյակ / և առնվազն մեկ անգամ՝ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում /2-րդ հաշվարկային կիսամյակ/:

,,էյ Ի Ջի Սերվիս,, ՍՊԸ-ի կողմից Ձեր գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցումն իրականացվել է ս/թ փետրվար ամսին: Համաձայն համաձայնագրի 2.3 կետի 3-րդ ենթակետի բաժանորդը պարտավոր է գազասպառան համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման նպատակով չխոչընդոտել մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազասպառման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր

գործողությունները հավաստող ծառայողական վկայական՝ լուսանկարով, և հայտնում է բաժանորդի քարտի համարը:

Ձեր պնդումը, իբրև մատակարարի ներկայացուցիչը տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման նպատակով ներկայացել է Ձեր գազասպառման համակարգի տեղակայման տարածք առանց ծառայողական վկայականի՝ լուսանկարով, և չի հայտնել Ձեր բաժանորդային համարը, չի համապատասխանում իրականությանը:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ դուք օգտվել եք ,, էկոնոմգազ,, ՍՊԸ-ի ներտնային սպասարկման ծառայությունից՝ վերջինիս հետ կնքելով ներտնային սպասարկման ծառայության պայմանագիր, տեղեկացնեմ, որ ,,Գազպրոմ Արմենիա,, ՓԲԸ և ,,էյ- Ի- Զի Սերվիս,, ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիր համաձայն՝ գազասպառման համակարգերի,այդ թվում Ձեր, տեխնիկական սպասարկման ծառայությունները մատուցվում են ,,էյ- Ի -Զի Սերվիս ՍՊԸ-ի կողմից:

Առդիր՝ 5 թերթ:

Տնօրեն՝ Մ. Խչեյան